Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
ապրիլի 15-ի N 511 - Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի
հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշման

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ ծառայություն)՝ հարկադիր կատարման ծառայողների (այսուհետ՝ հարկադիր կատարողներ) կատարողականի գնահատման առանձնահատկությունները:

2. Կատարողականն աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքի արդյունքները և այդ արդյունքներին հասնելու արդյունավետությունն է, որը գնահատում է անմիջական ղեկավարը: Յուրաքանչյուր ամսվա ավարտին կատարվում է ընթացիկ գնահատում, որի հանրագումարը համարվում է կատարողականի կիսամյակային գնահատական:

3. Ծառայության յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանման համար, որտեղ առկա են հարկադիր կատարողների պաշտոններ, գլխավոր հարկադիր կատարողի ստորագրությամբ հաստատվում է տարեկան աշխատանքային ծրագիր՝ ելնելով տվյալ կառուցվածքային ստորաբաժանման իրավասություններին առնչվող, տվյալ մարմնի կանոնադրությամբ սահմանված նպատակներից և խնդիրներից և տվյալ ծառայողի պաշտոնի անձնագրից: Յուրաքանչյուր հարկադիր կատարողի աշխատանքային ծրագիրը հաստատվում է անմիջական ղեկավարի կողմից: Աշխատանքային ծրագրերում պետք է ընդգրկվեն ստորաբաժանման կողմից փաստացի իրականացվող աշխատանքները:

4. Յուրաքանչյուր հաջորդ տարվա համար աշխատանքային ծրագիրը հաստատվում է մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 20-ը: Կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքային ծրագիրը կազմվում և հաստատվում է՝ համաձայն N 1 ձևի: Հարկադիր կատարողի աշխատանքային ծրագիրը կազմվում և անմիջական ղեկավարի ստորագրությամբ հաստատվում է՝ համաձայն N 2 ձևի: Աշխատանքային ծրագրում, ըստ անհրաժեշտության, կարող են կատարվել փոփոխություններ:

5. Աշխատանքի նոր ընդունված հարկադիր կատարողի աշխատանքային ծրագիրը հաստատվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Աշխատանքային ծրագրի հաստատման և կատարողականների գնահատման նպատակը մարմնի կողմից հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքների ժամանակին, ամբողջ ծավալով, պատշաճ որակով իրականացման ապահովումն է:

7. Սույն որոշման N 1 հավելվածով սահմանված դրույթները հարկադիր կատարողների նկատմամբ կիրառվում են միայն սույն հավելվածով ուղղակիորեն նախատեսված դեպքերում՝ բացառությամբ V գլխի 52-57.1-ին կետերի:

8. Հարկադիր կատարողի պարգևատրման չափը որոշում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը՝ հիմք ընդունելով կատարողականի կիսամյակային գնահատականը: Ընդ որում, գերազանց արդյունքի դեպքում կատարողականը գնահատվում է 95-100 միավորի սահմաններում, լավ արդյունքի դեպքում՝ 85-94 միավորի սահմաններում, բավարար արդյունքի դեպքում՝ 75-84 միավորի սահմաններում, իսկ 75 միավորից ցածրը համարվում է անբավարար արդյունք: Ընդ որում, 75-100 միավորը համարվում է կատարողականի դրական գնահատական, իսկ 75-ից ցածրը՝ բացասական:

9. Կատարողականի գնահատականի արդյունքները հիմք են վերապատրաստման կարիքների գնահատման համար:

10. Կատարողականի տարեկան գնահատականը կիսամյակային գնահատականների միջին թվաբանականն է:

II. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ, ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ, ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

11. Ծառայության տարածքային մարմինների (բացառությամբ ոչ զույքային բնույթի կատարողական վարույթներ իրականացնող ստորաբաժանումների) հարկադիր կատարողների կատարողականների գնահատումն ամփոփվում է կիսամյակային կտրվածքով՝ հաշվի առնելով կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների ընթացիկ գնահատումների արդյունքները, որի համար հիմք են ընդունվում կատարողականի գնահատման ցուցիչները:

12. Կատարողականի գնահատման ցուցիչներն են՝

1) հարկադիր կատարողի կողմից իրականացվող կատարողական վարույթներով տվյալ ամսվա ընթացքում բռնագանձված գումարի տոկոսային հարաբերությունը տվյալ ամսվա բռնագանձման ենթակա գումարին: Ստացված տոկոսային արժեքի յուրաքանչյուր մեկ տոկոսը հավասարեցվում է 1 միավորի.

2) հարկադիր կատարողի կողմից իրականացվող կատարողական վարույթներով տվյալ ամսվա ընթացքում կարճված և ավարտված կատարողական վարույթների քանակի տոկոսային հարաբերությունը տվյալ ամսում ընթացք տրված կատարողական վարույթների քանակին: Ստացված տոկոսային արժեքի յուրաքանչյուր մեկ տոկոսը հավասարեցվում է 2 միավորի.

3) հարկադիր կատարողի կողմից իրականացվող կատարողական վարույթներով տվյալ ամսվա ընթացքում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով կարճված կատարողական վարույթների քանակի տոկոսային հարաբերությունը տվյալ ամսվա ընթացքում կարճված կատարողական վարույթների ընդհանուր քանակին: Ստացված տոկոսային արժեքի յուրաքանչյուր մեկ տոկոսը հավասարեցվում է 3 միավորի.

4) հարկադիր կատարողի կողմից իրականացվող կատարողական վարույթներով տվյալ ամսվա ընթացքում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 2-15-րդ կետերի հիմքով կարճված կատարողական վարույթների քանակի տոկոսային հարաբերությունը տվյալ ամսվա ընթացքում

կարճված կատարողական վարույթների քանակին: Ստացված տոկոսային արժեքի յուրաքանչյուր մեկ տոկոսը հավասարեցվում է 1 միավորի:

13. Սույն հավելվածի 12-րդ կետի 1-4-րդ ենթակետերով սահմանված կատարողականի գնահատման ցուցիչների հիման վրա յուրաքանչյուր ամսվա ավարտին հաշվարկված միավորների հանրագումարը համարվում է տվյալ ամսվա ընթացիկ գնահատական: Կատարողականի գնահատականը համարվում է գերազանց, եթե հաշվարկված միավորների հանրագումարը 501-ից ավելի է, գնահատականը համարվում է լավ, եթե հաշվարկված միավորների հանրագումարը 401-500 է, գնահատականը համարվում է բավարար, եթե հաշվարկված միավորների հանրագումարը 301-400 է: 300 միավորից ցածրը հանդիսանում է անբավարար արդյունք:

14. Ամսական ընթացիկ գնահատականների միջին թվաբանականը կատարողականի կիսամյակային գնահատականն է, որը որոշվում է սույն հավելվածի 13-րդ կետով սահմանված կարգով:

15. Ծառայության տարածքային մարմինների (բացառությամբ ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներ իրականացնող ստորաբաժանումների) բաժնի պետի, բաժնի պետի տեղակալի, բաժանմունքի պետի ամսական ընթացիկ և կիսամյակային գնահատումը կատարվում է սույն հավելվածի 13-րդ և 14-րդ կետերով սահմանված կարգով: Ընդ որում, հաշվարկի համար հիմք է ընդունվում բաժնի (բաժանմունքի) բոլոր հարկադիր կատարողների՝ համապատասխանաբար ամսական ընթացիկ և կատարողականի կիսամյակային գնահատականների միավորների միջին թվաբանականը:

III. ՈՉ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

16. Ծառայության ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներ իրականացնող և կենտրոնական մարմնի հարկադիր կատարողների կատարողականը

գնահատվում է կիսամյակային հաշվետվության հիման վրա՝ անմիջական ղեկավարի կողմից: Անմիջական ղեկավարը կատարողականը գնահատում է՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանում կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրությամբ կամ աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքների ժամանակին, ամբողջ ծավալով, պատշաճ որակով իրականացումը:

17. Ծառայության ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներ իրականացնող և կենտրոնական մարմնի բաժինների (բաժանմունքների) պետերի և բաժնի պետի տեղակալների կատարողականի գնահատականը որոշվում է՝ հաշվարկի համար հիմք ընդունելով բաժնի (բաժանմունքի) բոլոր հարկադիր կատարողների տվյալ ամսվա (կիսամյակի) կատարողականի գնահատման հիմք հանդիսացող միավորների միջին թվաբանականը:

18. Ծառայության ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներ իրականացնող և կենտրոնական մարմնի բաժինների հարկադիր կատարողների ամսական ընթացիկ և կիսամյակային կատարողականի գնահատումն իրականացվում է սույն հավելվածի 8-րդ կետով սահմանված կարգով:

Ձև N 1

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ
(ստորաբաժանման անվանումը)

NN ը/կ	**Աշխատանքի անվանումը**	**Աշխատանքի տեսակը (նպատակային կամ ընթացիկ)**	**Աշխատանքի նպատակը**	**Աշխատանքի արդյունքի ձևը**	**ԺԱՄԿԵՏԸ**	
					պլանը	**իրականը**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**
1.	Անվանում 1					
2.	Անվանում 2					
3.	Անվանում 3					
4.	Անվանում 4					
5.	Անվանում 5					
6.	Անվանում 6					
7.	Անվանում 7					
8.	Անվանում 8					
9.	Անվանում 9					
10.	Անվանում 10					
11.	Անվանում 11					
12.	Անվանում 12					
13.	Անվանում 13					
14.	Անվանում 14					
15.	Անվանում 15					
16.	Անվանում 16					
	Այլ ընթացիկ կամ չպլանավորված աշխատանքներ		**X**	**X**		
	Ընդամենը					

Կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի ստորագրությունը

Անունը, հայրանունը,
ազգանունը _____

Գլխավոր հարկադիր կատարողի ստորագրությունը

Անունը, հայրանունը,
ազգանունը _____

Ձև N 2

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ
(ստորաբաժանման անվանումը)

NN ը/կ	Աշխատանքի անվանումը	Աշխատանքի տեսակը (նպատակային կամ ընթացիկ)	Աշխատանքի նպատակը	Աշխատանքի արդյունքի ձևը	ԺԱՄԿԵՏԸ	
					պլանը	իրականը
1	2	3	4	5	6	7
1.	Անվանում 1					
2.	Անվանում 2					
3.	Անվանում 3					
4.	Անվանում 4					
5.	Անվանում 5					
6.	Անվանում 6					
7.	Անվանում 7					
8.	Անվանում 8					
9.	Անվանում 9					
10.	Անվանում 10					
11.	Անվանում 11					
12.	Անվանում 12					
13.	Անվանում 13					
14.	Անվանում 14					
15.	Անվանում 15					
16.	Անվանում 16					
	Այլ ընթացիկ կամ չպլանավորված աշխատանքներ		X	X		
	Ընդամենը					

Հարկադիր կատարողի ստորագրությունը

Անունը, հայրանունը,
ազգանունը _____

Անմիջական ղեկավարի ստորագրությունը

Անունը, հայրանունը,
ազգանունը _____»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15.04.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ